

Արտավազդ Նորայրի Կարապետյան

Ծնվել է 1994 թվականի հոկտեմբերի 27-ին, Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքում:

2012 թվականին ավարտել է Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի թիվ 5 միջնակարգ դպրոցը:

2012-2014թթ. պարտադիր ժամկետային զինծառայության է անցել ՀՀ զինված ուժերում:

2018 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2020 թվականին՝ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

12.06.2018 թվականի առ այսօր աշխատում է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

Ամուսնացած է, ունի մեկ դուստր:



Հայկ Պավլենի Երեմյան

Ծնվել է 1983 թվականի մարտի 27-ին, Գեղարքունիքի մարզի Լիճք գյուղում:

2003 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2005 թվականին՝ Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի մագիստրատուրան:

2013-2014թթ. ուսանել է Գերմանիայի Քիլ քաղաքի Քրիստիան Ալբրեխտի անվան համալսարանում՝ ստանալով միջազգային իրավունքի մագիստրոսի /LL.M. Int./ որակավորման աստիճան:

28.06.2005-04.10.2010թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում՝ 01.09.2005-04.10.2010թթ. զբաղեցնելով բանակային կորպուսի ավագ սպա-իրավաբանի պաշտոնը:

29.11.2010-14.06.2011թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի կազմակերպաիրավական վարչությունում՝ որպես կրտսեր մասնագետ:

14.06.2011-16.10.2012թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի կազմակերպաիրավական վարչությունում՝ որպես մասնագետ:

16.10.2012-09.07.2013թթ. Դատական դեպարտամենտի կազմակերպաիրավական վարչությունում՝ որպես ավագ մասնագետ:

17.11.2014-12.01.2015թթ. Դատական դեպարտամենտի կազմակերպաիրավական վարչությունում՝ որպես ավագ մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

2015 թվականին ավարտել է արդարադատության ակադեմիայի դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման դասընթացը:

26.05.2016-08.05.2018թթ. աշխատել է Գեղարքունիքի մարզի դատախազությունում՝ որպես դատախազ:

08.05.2018-09.10.2019թթ. աշխատել է Գեղարքունիքի մարզի դատախազությունում՝ որպես ավագ դատախազ:

09.10.2019-16.07.2020թթ. աշխատել է Արագածոտնի մարզի դատախազությունում՝ որպես ավագ դատախազ:

20.07.2020-21.01.2021թթ. աշխատել է ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում:

01.02.2021թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության ծառայության մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունում՝ որպես դատախազ:

2009 թվականին ՀՀ պաշտպանության նախարարի կողմից պարգևատրվել է «Վազգեն Սարգսյան» մեդալով:

2017 թվականին ՀՀ գլխավոր դատախազի կողմից պարգևատրվել է «Իրավակարգի ամրապնդման» մեդալով:

2018 թվականին պարգևատրվել է «ՀՀ դատախազության 100-ամյակ» հոբելյանական մեդալով:

Ամուսնացած է:



Ժենյա Էդիկի Նազարյան

Ծնվել է 1994 թվականի նոյեմբերի 12-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքում:

2012 թվականին ավարտել է Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի Մնաց Մելիք-Շահումյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցը:

2016 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2018 թվականին՝ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

03.08.2017-11.06.2018թթ. աշխատել է Երևան Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատական նիստերի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար:

19.06.2018-07.09.2018թթ. աշխատել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում՝ որպես դատավորի օգնականի ժամանակավոր պաշտոնակատար:

01.11.2018թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

Ամուսանցած չէ:



Էդգար Սարգիսի Մանասյան

Ծնվել է 1993 թվականի փետրվարի 8-ին, Շիրակի մարզի Գյումրի քաղաքում:

2009 թվականին ավարտել է Գյումրու Եղիշե Չարենցի անվան թիվ 25 միջնակարգ դպրոցը:

2014 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2016 թվականին՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գործարար կառավարման ֆակուլտետի մագիստրատուրան:

2015 թվականից հանդիսանում է ՀՀ Փաստաբանների պալատի անդամ:

2016 թվականին ավարտել է ՀՀ Արդարադատության ակադեմիայի դատախազների մասնագիտական վերապատրաստման դասընթացը:

01.05.2011-07.10.2015թթ. աշխատել է «Գյումրի Քոմերշլ Սենթր» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան:

2013-2017թթ. հանրային սննդի ոլորտում զբաղվել է ձեռնարկատիրական գործունեությամբ:

23.01.2017թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ դատախազության Շիրակի կայազորի զինվորական դատախազությունում՝ որպես դատախազ:

2018 թվականին աշխատել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղում՝ որպես դասախոս:



Բունիաթ Ավետիքի Եղիազարյան

Ծնվել է 1986 թվականի մայիսի 21-ին, Գեղարքունիքի մարզի Վաղաշեն գյուղում:

2002 թվականին ավարտել է Վաղաշեն գյուղի միջնակարգ դպրոցը:

2007 թվականին ավարտել է ՀՀ ոստիկանության ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետը:

01.06.2007-30.10.2009թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունու քննչական բաժնում՝ որպես քննիչ:

30.10.2009-02.04.2001թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունու քննչական բաժնում՝ որպես ավագ քննիչ:

02.04.2011-19.12.2012թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունու քննչական բաժնում՝ որպես ՀԿԳ ավագ քննիչ :

19.12.2012-02.10.2014թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունու քննչական բաժնի 2-րդ բաժանմունքի պետ:

02.10.2014-20.11.2017թթ. աշխատել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի պետի տեղակալ:

09.04.2020-14.05.2020թթ. աշխատել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի պետի տեղակալ:

14.05.2020-05.06.2020թթ. աշխատել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնի ՀԿԳ ավագ քննիչ:

19.01.2020 թվականից հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ և ծավալում է փաստաբանական գործունեություն:

20.07.2020 թվականից մինչ օրս աշխատում է «Յուստինա» իրավաբանական գրասենյակում՝ որպես ավագ իրավաբան-փաստաբան:

Ամուսնացած է, ունի 3 որդի:



Արփինե Մանվելի Շտոյան

Ծնվել է 1985 թվականի հոկտեմբերի 4-ին Շիրակի մարզ, ք.Գյումրում:

2002 թվականին ավարտել է Գյումրու Անանիա Շիրակացու անվան թիվ 16 միջնակարգ դպրոցը:

2006 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2012 թվականին ավարտել է ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

01.03.2008-12.05.2009թթ. աշխատել է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի գործավար:

12.05.2009-28.08.2014թթ. աշխատել է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

28.08.2014-24.11.2014թթ. աշխատել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմում՝ որպես արխավապահի ժամանակավոր պաշտոնակատար:

24.11.2014թ.-ից առ այսօր աշխատում է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

Ամուսնացած է, ունի երկու երեխա:



Արտակ Հայկի Կարապետյան

Ծնվել է 1986 թվականի մայիսի 25-ին, Վայոց Ձորի մարզի, Եղեգնաձորի շրջանի Եղեգնաձոր ավանում:

2003 թվականին ավարտել է Վայոց Ձորի Հովհաննես Հովհաննիսյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցը:

2007 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, 2013 թվականին՝ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2007-2009թթ. պարտադիր ժամկետային զինծառայության է անցել ՀՀ զինված ուժերում:

11.07.2011-06.10.2014թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթի քննչական բաժնում՝ որպես քննիչ:

06.10.2014-17.10.2014թթ. աշխատել է քննչական կոմիտեի ԵՔՔՎ Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում՝ որպես ավագ քննիչ:

20.10.2014-01.03.2016թթ. աշխատել է ՀՀ հատուկ քննչական ծառայության կոռուպցիոն, կազմակերպված և պաշտոնեական հանցագործությունների քննության վարչությունում՝ որպես ՀԿԳ քննիչ:

13.05.2016-06.05.2019թթ. աշխատել է Երևան քաղաքի Ավան և Նոր-Նորք վարչական շրջանների դատախազությունում՝ որպես դատախազ:

06.05.2019-17.07.2020թթ. աշխատել է Երևան քաղաքի դատախազությունում՝ որպես դատախազ:

17.07.2020թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտագության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վաչությունում՝ որպես դատախազ:

06.06.2013 թվականին պարգևատրվել է ՀՀ ոստիկանության պետի «Քննչական գլխավոր վարչության 50-ամյակ» կրծքանշանով:

22.06.2017 թվականին պարգևատրվել է ՀՀ ոստիկանության պետի «Համագործակցության ամրապնդման համար» մեդալով:

25.09.2018թ. պարգևատրվել է ՀՀ գլխավոր դատախազի «Հայաստանի Հանրապետության դատախազության 100-ամյակ» հոբելյանական մեդալով:

Ամուսնացած է, ունի երկու երեխա:



Հրաչ Հայկի Դաջունց

Ծնվել է 29.09.1990թ.-ին Սյունիքի մարզի Վերիշեն գյուղում:

2007թ. ավարտել է Սյունիքի մարզի Վերիշենի միջնակարգ դպրոցը:

2011թ. ավարտել է Գորիսի պետական համալսարանի իրավագիտության բաժնի բակալավրիատում՝ ստանալով մանկավարժության բակալավրի աստիճան՝ իրավագիտություն մասնագիտությամբ:

2013թ. ավարտել է Գորիսի պետական համալսարանի իրավագիտության բաժնի մագիստրատուրայում՝ ստանալով մանկավարժության մագիստրոսի աստիճան՝ իրավագիտություն մասնագիտությամբ:

2015թ. ավարտել է «Սյունիք» ինստիտուտի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը՝ ստանալով իրավագիտության բակալավրի աստիճան:

01.03.2012-11.02.2016թթ. աշխատել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնական:

08.01.2014-08.01.2016թթ. աշխատել է Գորիսի պետական համալսարանին կից «Սյունիքի» հայագիտական հետազոտությունների կենտրոնում՝ որպես գիտաշխատող:

11.02.2016-25.01.2018թթ. աշխատել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

25.01.2018թ.-ից առ այսօր աշխատում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

Ամուսնացած է, ունի երկու երեխա:



Սաթենիկ Հարությունի Անդրեասյան

Ծնվել է 1988 թվականի մայիսի 12-ին Երևան քաղաքում:

2004 թվականին ավարտել է Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի «Կոտայքի երեկոյան դպրոց» միջնակարգ դպրոցը:

2008 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2010 թվականին՝ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

01.04.2008-01.02.2014թթ. աշխատել է «Հիդրոշինարար-5» ԲԲԸ-ում՝ որպես իրավաբան, ապա տնօրեն:

15.10.2011 թվականից հանդիսանում է Փաստաբանների պալատի անդամ (փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը կասեցված է):

14.04.2011-16.01.2014թթ. աշխատել է «Ադամանդ» ապրանքահումքային բորսայի և «Ֆլորես» աճուրդի տան իրավաբան:

01.10.2012-15.01.2014թթ. աշխատել է «Մաքս-Նիկել» ընկերության փաստաբան:

01.05.2013-14.01.2014թթ. «Ադամանդ» ապրանքահումքային բորսայի իրավաբանական դեպարտամենտի ղեկավարը:

17.01.2014-18.02.2015թթ. աշխատել է Արագածոտնի մարզի դատախազությունում՝ որպես դատախազ:

18.02.2015-16.09.2020թթ. աշխատել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների դատախազությունում՝ որպես դատախազ:

16.09.2020թթ. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների դատախազությունում՝ որպես ավագ դատախազ:

Ամուսնացած չէ:



Հակոբ Մանվելի Մանուկյան

Ծնվել է 1989 թվականի հունիսի 10-ին, Երևան քաղաքում:

2006 թվականին ավարտել է Երևանի թիվ 110 միջնակարգ դպրոցը:

2012 թվականին ավարտել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2007-2009թթ. պարտադիր ժամկետային զինծառայության է անցել ՀՀ զինված ուժերում:

14.02.2014-06.10.2014թթ. աշխատել է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթի քննչական բաժնում՝ որպես քննիչ:

06.10.2014-30.12.2014թթ. աշխատել է ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում՝ որպես քննիչ:

30.12.2014-31.10.2018թթ. ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում՝ որպես ավագ քննիչ:

05.11.2018-05.08.2020թթ. աշխատել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում՝ որպես ավագ քննիչ:

05.10.2017 թվականին ՀՀ քննչական կոմիտեի նախագահի կողմից Անբասիր ծառայության համար պարգևատրվել է չորրորդ աստիճանի մեդալով, իսկ 18.12.2019 թվականին՝ ՀՀ քննչական կոմիտեի հետ համագործակցության համար մեդալով:

29.07.2021 թվականից հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ:

07.04.2021 թվականից առ այսօր աշխատում է «Ունիվերսալ Բիզնես սոլուշն» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան:

Ամուսնացած չէ:



Մակար Գեղամի Կիրակոսյան

Ծնվել է 1987 թվականի սեպտեմբերի 26-ին, Երևան քաղաքում:

2011 թվականին ավարտել է Գավառի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2013 թվականին՝ Գավառի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

25.02.2008-19.06.2009թթ. աշխատել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում՝ որպես դատավորի գործավար:

2009-2011թթ. պարտադիր ժամկետային զինծառայության է անցել ՀՀ զինված ուժերում:

08.09.2011-03.07.2012թթ. աշխատել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում՝ որպես դատավորի գործավար:

03.07.2012-15.07.2014թթ. աշխատել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

15.07.2014-29.03.2016թթ. աշխատել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում՝ որպես դատարանի նախագահի խորհրդական:

29.03.2016-15.06.2017թթ. աշխատել է ՀՀ դատական դեպարտամենտի վերահսկողության բաժնում՝ որպես մասնագետ:

15.06.2017-14.12.2017թթ. աշխատել է ՀՀ դատական դեպարտամենտի Միջազգային համագործակցության վարչության Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտերի բաժնում՝ որպես մասնագետ:

14.12.2017-07.03.2018թթ. աշխատել է ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

07.03.2018-14.05.2018թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի Իրավական վերլուծության վարչության Հայաստանի Հանրապետության դատական իշխանության ինքնակառավարման մարմինների բաժնում՝ որպես մասնագետ:

14.05.2018-01.11.2018թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի Դատական պրակտիկայի ամփոփման և վիճակագրության վարչության դատական պրակտիկայի ամփոփման բաժնում՝ որպես մասնագետ:

01.11.2018-25.09.2020թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի Դատական պրակտիկայի վերլուծության և մշտադիտարկման վարչության Մշտադիտարկման և դատական վիճակագրության բաժնում՝ որպես գլխավոր մասնագետ:

25.09.2020թ.-ից առ այսօր աշխատում է Դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի վերլուծության և մշտադիտարկման վարչության Դատական պրակտիկայի վերլուծության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար:

2019 թվականից հանդիսանում է քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովի անդամ:

2021 թվականին դասավանդել է Արդարադատության ակադեմիայում:

2020 թվականից հանդիսանում է «Աջակցություն Հայաստանում պրոբացիայի ծառայության զարգացման» ծրագրի համակարգող խորհրդի անդամ (Դատական դեպարտամենտի ներկայացուցիչ):

2020 թվականից հանդիսանում է ՀՀ կենտրոնական բանկի Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (ՓԼ/ԱՖ) ռիսկի ազգային գնահատման հետ կապված աշխատանքների իրականացման աշխատանքային խմբի անդամ (Դատական դեպարտամենտի ներկայացուցիչ):

Ամուսնացած է, ունի երկու երեխա:



Նարեկ Սաշայի Բադալյան

Ծնվել է 1992 թվականի հունվարի 6-ին, Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղում:

2012 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2017 թվականին՝ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2012-2014թթ. պարտադիր ժամկետային զինծառայության է անցել ՀՀ զինված ուժերում: Պարգևատրվել է «Հայոց բանակի գերազանցիկ», «Լավագույն մարզիկ» և «Քաջարի մարտիկ» կրծքանշաններով:

29.07.2015-01.07.2016թթ. աշխատել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի գործավար:

01.07.2016-03.11.2016թթ. աշխատել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի գործավար:

03.11.2016-25.01.2018թթ. աշխատել է Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնական:

25.01.2018թ.-ից առ այսօր աշխատում է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

Ամուսնացած չէ:



Իվետա Ռուբիկի Մուրադյան

Ծնվել է 1983 թվականի դեկտեմբերի 15-ին, Երևան քաղաքում:

2006 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2021թ. ավարտել է Երևանի դատական փորձագիտության և հոգեբանության «ԱԶՊԱԹ-Վետերան» ինստիտուտի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

10.08.2007-08.10.2007թթ. աշխատել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի առաջին ատյանի դատարանի աշխատակազմում՝ որպես արխիվապահի ժամանակավոր պաշտոնակատար:

08.10.2007-19.01.2018թթ. աշխատել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի առաջին ատյանի դատարանում՝ որպես դատական նիստերի քատուղար:

19.01.2018թ.-ից առ այսօր աշխատում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

Ամուսնացած է, ունի մեկ երեխա:



Ժենյա Անուշավանի Մելիքսեթյան

Ծնվել է 1987 թվականի հուլիսի 18-ին, Լենինական քաղաքում:

2004 թվականին ավարտել է Ռուսաստանի Դաշնության Եկատերինբուրգ քաղաքի թիվ 163 միջնակարգ դպրոցը՝ ոսկե մեդալով:

2009 թվականին ավարտել է Ռուսաստանի Դաշնության Ուրալի պետական իրավաբանական ակադեմիան, որն ավարտելուց հետո իրեն շնորհվել է իրավաբան մասնագետի որակավորում՝ «Իրավաբանություն» մասնագիտությամբ:

01.09.2007-28.06.2009թթ. ուսուցանվել է Ուրալի պետական իրավաբանական ակադեմիայի Արդարադատության ինստիտուտում՝ դատական մասնագիտացման ծրագրով:

04.08.2009-26.06.2014թթ. աշխատել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի գործավար:

26.06.2014-16.01.2015թթ. աշխատել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատական նիստերի քարտուղար:

16.01.2015-06.11.2019թթ. աշխատել է աշխատել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

06.11.2019-19.12.2019թթ. աշխատել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատական նիստերի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար:

19.12.2019թ.-ից առ այսօր աշխատում է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում որպես դատավորի օգնական:

Ամուսնացած է, ունի երկու որդի:



Միեր Արարատի Հակոբյան

Ծնվել է 1988 թվականի փետրվարի 12-ին, Երևան քաղաքում:

2008 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2010 թվականին՝ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2010-2013 թվականներին սովորել է Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի ասպիրանտուրայում և 09.01.2014 թվականին ստացել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

2013 թվականի հունվարից մինչև մայիս ամիսը սովորել է «Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ում:

2015 թվականին սովորել է «Տավիտյան հիմնադրամի» դրամաշնորհային ծրագրի միջոցով ԱՄՆ Թավթսի համալսարանի Ֆլետչերի իրավունքի և դիվանագիտության դպրոցում:

01.11.2008-14.04.2009թթ.աշխատել է «Սիմ Թեքնոլոջիս» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան:

18.04.2009-01.01.2010թթ. աշխատել է ՀՀ Վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների վարչությունում՝ որպես կրտսեր մասնագետ:

01.01.2010-15.10.2010թթ. աշխատել է ՀՀ դատական դեպարտամենտի կազմակերպաիրավական վարչությունում՝ որպես կրտսեր մասնագետ:

15.02.2010 թվականին համատեղության կարգով աշխատել է Լորիս Քալաշյանի անվան հայկական բաց համալսարանում՝ որպես դասախոս:

12.10.2009-30.12.2009թթ.համատեղության կարգով աշխատել է աշխատել է «ՀՀ դատական դպրոց» ՊՈԱԿ-ում՝ որպես դասախոս:

28.10.2010-09.11.2011թթ.աշխատել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության դատական ներկայացուցչության ապահովման բաժնում՝ որպես որպես գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

18.11.2011-08.01.2014թթ. աշխատել է Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

17.01.2014-01.06.2016թթ. աշխատել է ՀՀ գլխավոր դատախազության իրավական ապահովման և եվրաինտեգրման բաժնում՝ որպես դատախազ:

01.06.2016-21.07.2016թթ. աշխատել է ՀՀ գլխավոր դատախազության միջազգային համագործակցության և իրավական ապահովման վարչությունում՝ որպես դատախազ:

25.07.2016-18.10.2016թթ. աշխատել է «Նաիրի Ինշուրանս» ՍՊԸ-ում՝ որպես իրավաբան:

18.10.2016-22.01.2018թթ. աշխատել է ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչությունում՝ որպես վարչության պետի տեղակալ:

01.08.2019թ.-ից առ այսօր աշխատում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Տրանսգազ» ՍՊԸ-ում՝ որպես իրավախորհրդատու:

15.10.2011 թվականից հանդիսանում է ՀՀ Փաստաբանական պալատի անդամ և 2018 թվականից զբաղվում է փաստաբանական գործունեությամբ:

03.07.2017 թվականի ՀՀ գլխավոր դատախազի հրամանով պարգևատրվել է ՀՀ դատախազության կրծքանշանով:

2014-2018թթ. հանդիսացել է ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսի խմբագրական խորհրդի անդամ:

2015-2018 թվականներին մասնակցել է Արդարադատության ակադեմիայի կողմից կազմակերպվող՝ դատախազների տարեկան վերապատրաստման և դատախազների ու դատավորների թեկնածուների մասնագիտական պատրաստմանն ուղղված ուսումնական ծրագրերի դասավանդման գործընթացին՝ որպես դասավանդող:

Հանդիսանում է մեկ տասնյակից ավել գիտական հոդվածների ու գիտական աշխատությունների հեղինակ /համահեղինակ:

28.09.2020-18.10.2020թթ. մասնակցել է Արցախի Հանրապետության Պաշտպանության բանակի թիվ N զորամասի կազմում մարտական գործողություններին:

Ամուսնացած է:



Կարեն Ցոլակի Հակոբյան

Ծնվել է 1975 թվականի փետրվարի 9-ին, ՀԽՍՀ Մարտունու շրջանի Աստղաձոր գյուղում:

1992թթ. ավարտել է Աստղաձոր գյուղի միջնակարգ դպրոցը:

1993-1994թթ. պարտադիր ժամկետային զինծառայության է անցել ՀՀ զինված ուժերում:

2000թթ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի բակալավրիատը:

02.04.2001-03.05.2002թթ. աշխատել է Զանգեզուրի կայազորի զինվորական դատախազությունում՝ որպես քննիչ-ստաժոր:

03.05.2002-12.06.2002թթ. աշխատել է Զանգեզուրի կայազորի զինվորական դատախազությունում՝ որպես քննիչ:

12.06.2002-10.02.2003թթ. աշխատել է Զանգեզուրի կայազորի զինվորական դատախազությունում՝ որպես ավագ քննիչ:

10.02.2003-01.12.2007թթ. աշխատել է Սևանի կայազորի զինվորական դատախազությունում՝ որպես ավագ քննիչ:

30.11.2007-01.02.2010թթ. ծառայել է զինված ուժերի շարքերում:

02.02.2010-18.02.2015թթ. աշխատել է Սևանի կայազորի զինվորական դատախազության դատախազ:

18.02.2015թ.-ից առ այսօր աշխատում է Սևանի կայազորի զինվորական դատախազության ավագ դատախազ:

Ամուսնացած է, ունի երեք երեխա:



Անի Արարատի Մարտիրոսյան

Ծնվել է 1987 թվականի նոյեմբերի 16-ին, քաղաք Երևանում:

2007 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը, իսկ 2009 թվականին՝ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

23.10.2006-09.09.2009թթ. աշխատել է ՀՀ արդարադատության նախարարությունում՝ որպես աշխատակազմի ղեկավարի օգնական:

09.09.2009-06.07.2010թթ. աշխատել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչության քրեական և վարչական գործերով բաժնում՝ որպես առաջին կարգի մասնագետ:

06.07.2010-29.06.2018թթ. աշխատել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչության քրեական և վարչական գործերով բաժնում՝ որպես առաջին կարգի մասնագետ:

29.06.2018-24.05.2019թթ. աշխատել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետ կապերի վարչության քաղաքացիական և տնտեսական գործերով բաժնում՝ որպես գլխավոր մասնագետ:

24.05.2019-19.02.2021թթ. աշխատել է Վարչապետի աշխատակազմի Անվտանգության խորհրդի գրասենյակի անվտանգային քաղաքականության և հիմնարար փաստաթղթերի վարչության ռազմավարական առաջնորդող փաստաթղթերի և քաղաքականության բաժնում՝ որպես գլխավոր մասնագետի պաշտոնակատար:

01.03.2021-07.10.2021թթ. աշխատել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայությունում՝ որպես գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար:

07.10.2021թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայությունում՝ որպես ծառայության պետի պաշտոնակատար:

2012 թվականից հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ (փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը կասեցված):

Ամուսնացած է, ունի մեկ երեխա:



Նարա Պարգևի Հովհաննիսյան

Ծնվել է 1977 թվականի հունիսի 27-ին Լոռու մարզի, Կիրովական քաղաքում:

1994 թվականին ավարտել է Վանաձորի Ստ. Շահումյանի անվան միջնակարգ դպրոցը:

1999 թվականին ավարտել է Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտը:

2008 թվականին ավարտել է «Մխիթար Գոշ» հայ-ռուսական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

03.04.2000-20.08.2001թթ. աշխատել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատական նիստերի քարտուղար:

27.10.2006-13.03.2009թթ. աշխատել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

18.03.2011թ.-ից առ այսօր աշխատում է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական:

Ամուսնացած չէ:



Վազգեն Արթուրի Սմբատյան

Ծնվել է 1985 թվականի հունվարի 01-ի, Վայոց Ձորի մարզի Գետափ գյուղում:

2001 թվականին ավարտել է Գետափի միջնակարգ դպրոցը:

2006 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի բակալավրիատը:

2006-2008թթ. պարտադիր ժամկետային զինծառայության է անցել ՀՀ զինված ուժերում:

2012 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2018 թվականին ավարտել է Հյուսիսային համալսարանի Իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2018 թվականին հանդիսացել է ՀՀ արդարադատության ակադեմիայի ունկնդիր՝ որպես դատախազի թեկնածու:

22.04.2009-05.12.2012թթ. աշխատել է Երևանի քաղաքապետարանի «Հողի և ունեցվածքի գործառնություններ» ՊՓԲ ընկերությունում՝ որպես գլխավոր մասնագետ:

05.12.2012-02.10.2014թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման վարչությունում՝ որպես կրտսեր մասնագետ:

02.10.2014-05.10.2015թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման վարչությունում՝ որպես մասնագետ:

05.10.2015-12.06.2018թթ. աշխատել է Դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման և վիճակագրության վարչության Դատական պրակտիկայի ամփոփման բաժին՝ որպես մասնագետ:

17.12.2018-28.03.2019թթ. աշխատել է Արարատի մարզի դատախազության դատախազ:

28.03.2019թ.-ից առ այսօր աշխատում է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազության դատախազ:

Ամուսնացած չէ:



Հարություն Գագիկի Գրիգորյան

Ծնվել է 1991 թվականի հոկտեմբերի 20-ին, Երևան քաղաքում:

2008 թվականին ավարտել է Երևան քաղաքի Խաչիկ Դաշտենցի անվան թիվ 114 միջնակարգ դպրոցը:

2012 թվականին ավարտել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ֆակուլտետի բակալավրիատը:

2012-2014թթ. պարտադիր ժամկետային զինծառայության է անցել ՀՀ զինված ուժերում:

2016 թվականին ավարտել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսական ֆակուլտետի մագիստրատուրան:

2021 թվականին ավարտել է Ղազախստանի Հանրապետությունում Բաիշևի համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

05.09.2016-17.03.2017թթ. աշխատել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնական:

17.03.2017 թվականից առ այսօր աշխատում է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում՝ որպես դատավորի օգնական:

**Հայկ Սերժիկի Իսրայելյան**

Ծնվել է 1980 թվականի հոկտեմբերի 26-ին, Երևան քաղաքում:

1997թվականի ավարտել է Երևան քաղաքի թիվ 50 միջնակարգ դպրոցը:

1998-2000թթ. պարտադիր ժամկետային զինծառայության է անցել ՀՀ զինված ուժերում:

2001թվականին ավարտել է «Սլավոնական գործարարական համալսարան»-ի իրավագիտության ֆակուլտետը:

2005թվականին ավարտել է «Հյուսիսային համալսարան»-ի իրավագիտության ֆակուլտետը:

06.06.2003-30.01.2005թթ. աշխատել է «Դուստր Արևիկ» ՍՊԸ-ում՝ որպես իրավախորհրդատու:

03.01.2005-30.10.2005թթ. աշխատել է «Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ-ում՝ որպես իրավախորհրդատու:

20.10.2006թվականից հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ:

01.06.2007-30.09.2009թթ. աշխատել է «Տաշիր ինվեստ գրուպ» ՓԲԸ-ում՝ որպես իրավաբան:

01.10.2009-11.01.2010թթ. աշխատել է «Ռուբիկոն» ՍՊԸ-ում՝ որպես իրավախորհրդատու:

11.01.2010-30.12.2015թթ. աշխատել է Փաստաբանների պալատի Հանրային պաշտպանի գրասենյակում՝ որպես հանրային պաշտպան:

2017 թվականից հանդիսանում է «Իսրայելյան փաստաբանական գրասենյակ» ՍՊԸ-ի հիմնադիր:

04.12.2018թվականից առ այսօր աշխատում է «Հայաստանի կույրերի միավորում» հաշմանդամների ՀԿ-ում՝ որպես իրավախորհրդատու:

Ամուսնալուծված է, ունի 1 դուստր: